

Շրջանի ծայր հյուսիսային բնակավայրն է, կից Ախքյորփի և Չանախչի հայկական գյուղերին:

Գյուղի մեջ և շրջակա անտառներում պահպանվում են մի շարք հուշարձաններ՝ բնակատեղիներ, եկեղեցիներ, մատուռներ, գերեզմանատներ: Դրանց թվում առանձնապես կարևորվում են Չախկալաբերդ հզոր ամրոցն ու հորակերտի վանքը: Ամրոցն առավել լավ պահպանվածներից է, 10-15 մ բարձրությամբ պատերով, կիսաշրջան աշտարակներով, որոնց որմածքում կան սենյակներ: Փլատակները չեն պեղվել, իսկ արձանագրություններ չեն նկատվել:

Խ Ո Ր Ա Կ Ե Ր Տ Ի Վ Ա Ն Ք

Հյուսիսային Հայաստանի նշանավոր վանական հաստատություններից էր: Գտնվում է Զիլիգա գյուղից մոտ 4 կմ հարավ-արևելք, Լալվար լեռան ստորոտում: Ներկայումս երբեմնի խոշոր վանքից մնացել են մեծ՝ Ս. Աստվածածին եկեղեցին, կիսակործան գավիթը, ավերակված սեղանատունը, երկու մատուռներ և խաչքարեր:

Եկեղեցին, որն իր իսկ վիմագրերում կոչվում է «սուրբ ուխտ», «սուրբ եկեղեցի», իսկ 1707 թ. վերանորոգման արձանագրության մեջ Ս. Աստվածածին, չորս ավանդատնով, ներքուստ խաչածև հատակագծով ուղղանկյուն շինություն է:⁵¹ Տանիքը կրում են վեց խաչածևող կամարներ, որոնք ավարտվում են ստալակտիկային զարդածևի քարաշարով և որպես կառուցողական հնարանք ծառայում իբրև գմբեթի հիմքին անցնելու միջոց: Ինքնատիպ է նաև գմբեթը: Թմբուկի վերին կեսն ութանիստ է, իսկ ստորինը կազմում են երեսուրեք քառանիստ սյուները: Այսօրինակ կառուցվածքը ձևավորման նրբագեղ և ինքնատիպ միջոց լինելուց բացի միաժամանակ ծառայում է նաև լուսավորման նպատակներին:

Գմբեթակիր կամարները պահող ներսի չորս մույթածև մշակված պատերի անկյունները ձևավորված են կլորավուն երեք որմնասյուների փնջային եղանակով, որոնք առավել շեշտում են ներքին ծավալատարածական հորինվածքի ուղղահայաց սլացիկության վայելչա-գեղությունը: Պատերին սվաղի ու որմնանկարների հետքեր կան:

Գավիթը ևս աչքի է ընկնում ճարտարապետական հարուստ ձևերով: Այստեղ ևս օգտագործված է խաչածևող կամարների կառուցվածքային համակարգը, ինչպես հորանաշատում, Հաղբատավանքում և այլուր:

Սեղանատունը կամարածածկ տանիքով ուղղանկյուն երկարավուն շենք է եղել, որից մնում են միայն ստորին շարքերը:

Մատուռները փոքրիկ թաղածածկ շինություններ են, ավերված:

Ամբողջ համալիրը կառուցվել է սալիտակաղեղնավուն քարից: Ժամանակին շրջափակված է եղել պարսպապատերով, որոնց ներքո գտնվել են նաև միաբանների բնակելի տները:

Մատենագրական սկզբնաղբյուրներում վսնքի կառուցման փաստը չի արձանագրվել, և տեղեկությունները տալիս են գերազանցապես վիմական վկայագրերը, որոնցից տեղեկանում ենք 1252 թվականին եկեղեցու կառուցման մասին:

⁵¹ Շախկյան, Լոռի, 133-134: